ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 3
ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/50 ծածկագրով
գնման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

ք.Երևան **21. 05. 2024թ.**

Ժամը՝ **11:00**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան Կ. Ուլնեցի 31 հասցե, ՀՎՀՀ 0084644, էլեկտրոնային փոստ՝ atdf@atdf.am) գործադիր տնօրենի **«17» ապրիլ 2024թ. թիվ 601-Ա** հրամանով ստեղծված գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **«ՀՀ Գեղարքունիքի մարզի Մաքենիս բնակավայրի կրթահամալիրի կառուցման» աշխատանքների** ձեռքբերման նպատակով **ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/50** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի գնահատման նիստին (այսուհետ՝ նիստ) մասնակցում է հետևյալ կազմով՝

Ֆելիքս Սարգսյան ՝ Հանձնաժողովի նախագահ
Ալեքսանդր Ոսկանյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Լիլիթ Պետրոսյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Արամ Գալստյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Լուսինե Ղազարյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Վարդինե Իսահակյան ՝ Հանձնաժողովի բացող անդամ
Սոնա Կարապետյան ՝ Հանձնաժողովի բացող անդամ

Հանձնաժողովը, հիմքում ունենալով Ընթացակարգի բացման նիստի արձանագրությունը և ներկայացված փաստաթղթերը, արձանագրեց, որ՝

1.Տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու, յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Հանձնաժողովն արձանագրեց, որ

1.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտում բացակայում են Հայտը ներկայացնելուն նախորդող հինգ տարիների ընթացքում բնակելի կամ հասարակական նշանակության շենքերի կառուցման կամ վերակառուցման պատշաճ կատարված և ամբողջովին ավարտված առնվազն երեք կապալի օբյեկտներին վերաբերող պայմանագրերը (ներառյալ համաձայնագրերը) և պատվիրատուի կողմից հաստատված ավարտական ակտերը:

1.2 «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից տրամադրվել է S.W.I.F.T հեռահաղորդակցման համակարգով ստացված թիվ GRN/24/185/OR գրությունը, համաձայն որի ներկայացված է տեղեկատվություն 08.05.2024թ. <<Глобус>> բանկի կողմից թողարկված 164000,00 ԱՄՆ դոլար գումարի չափով, թիվ 39371 հայտի ապահովման երաշխիքի վերաբերյալ:Սույն տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

1.3Մասնակցի հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերը առկա են և կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան բացառությամբ՝

*Մասնակից «Բախմաչգազբուդսերվիս» ՍՊԸ-ի հայտում Հավելված 1.3-ը «ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ» բացակայում է: Հայտը ներկայացնելուն նախորդող հինգ տարիների ընթացքում բնակելի կամ հասարակական նշանակության շենքերի կառուցման կամ վերակառուցման պատշաճ կատարված և ամբողջովին ավարտված առնվազն երեք կապալի օբյեկտներին վերաբերող պայմանագրերը (ներառյալ համաձայնագրերը) և պատվիրատուի կողմից հաստատված ավարտական

ակտերը բացակայում են, ինչպես նաև տեղակապում իրականացնող «Շին-Կոմֆորտ» ՍՊԸ-ի Ճարտարագետ-Կոնստրուկտորի արտոնագիրը չի բավարարում հրավերով սահմանված պայմաններին:

2. Հանձնաժողովը որոշեց.

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 41-րդ կետը մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը:

2.2 Ծանուցել Մասնակցին շտկել արձանագրված անհամապատասխանությունները, մինչև նիստի կասեցման վերջնաժամկետը՝ **20.05.2024թ.** ներառյալ:

3. Հանձնաժողովը արձանագրեց, որ.

3.1 Մասնակից «Բախմաչգազբուդսերվիս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են բավարար:

3.2 Մասնակցի կողմից չեն ներկայացվել նախորդող հինգ տարիների ընթացքում բնակելի կամ հասարակական նշանակության շենքերի կառուցման կամ վերակառուցման պատշաճ կատարված և ամբողջովին ավարտված առնվազն երեք կապալի օբյեկտներին վերաբերող պայմանագրերը (ներառյալ համաձայնագրերը) և պատվիրատուի կողմից հաստատված ավարտական ակտերը, ուստի մասնակցի որակավորման ապահովման չափը հավասար է գնային առաջարկի 30 տոկոսին:

4.Տեղեկություն՝ հրավերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին:

4.1 ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/50 ծածկագրով ընթացակարգի հրավերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն ստացվել:

5.Հանձնաժողովը որոշեց.

5.1 Ընտրված մասնակից ճանաչել՝

Հ/Հ	Գնման Առարկան	Մասնակցի անվանումը	Պայմանագրի գինը ՀՀ դրամ
1	«ՀՀ Գեղարքունիքի մարզի Մաքենիս բնակավայրի կրթահամալիրների կառուցման» աշխատանքներ	«Բախմաչգազբուդսերվիս» ՍՊԸ	1 260 000 000 /Մեկ միլիարդ երկու հարյուր վաթսուն միլիոն/

5.2 «ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/50» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին տեքստը:

5.3 Սույն ընթացակարգի համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում:

Հանձնաժողովի նիստը

նախագահող՝

Ֆելիքս Սարգսյան

անդամներ՝

Ալեքսանդր Ոսկանյան

Լիլիթ Պետրոսյան

Արամ Գալստյան

Լուսինե Ղազարյան

Վարդինե Իսահակյան

Սոնա Կարապետյան

քարտուղար՝

Ռոզա Ասատրյան